ԻՎԱՆ ՊԵՏՐՈՎԻՉ ԿՐԻՊՅԱԿԵՎԻՉ

Անցյալ տարի ամռանը եղբայրական Ուկրաինայի, Հայաստանի և ամբողջ Միության գիտական հասարակայնությունը հանդիսավորությամբ նշեց ուկրաինացի մեծավաստակ գիտնական, խոշորագույն պատմաբան, Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Իվան Պետրովիչ Կրիպյակևիչի ծննդյան 80 և գիտական ու հասարակական գործունեության 60-ամյա հոբելյանը։ Իսկ այս տարվա ապրիլին հեռագիրը մեզ հասցրեց մեծանուն գիտնականի մահվան բոթը։

Մանր նոոուստ նոոո ուեոաինական պատմագիտությունը։ Կյանքից հեռացավ մի մարդ, որը վեց տասնամյակ շարունակ գիտնականի իր բազմակողմանի ընդունակությունները, մեծ տաղանդն ու անսպառ եռանդը ի սպաս էր դրել մայր ժողովրդի պատմության բազմաթիվ հարցերի հետազոտմանն ու մշակմանը, հանրապետությունում գիտական բարձրորակ կադրերի պատրաստմանն ու աճեցմանը։

Գիտության ասպարեզ մտնելով տակավին XX դարի սկզբին, Իվան Պետրովիչը մեծ կամք և տոկունություն հանդես բերեց հաղթահարելու համար այն բազմաթիվ դժվարություններն ու խոչընդոտները, որոնք խանգարում էին ուկրաինական ազգային պատմագրության զարգացմանը Արևմտյան Ուկրաինայի տերիտորիայում՝ ցարիզմի և բուրժուա-կալվածատիրական Լեհաստանի տիրապետության ծանր պայմաններում։

1907 թվականին լույս տեսավ նրա «Լվովյան Ռուսիան XVI դարի առաջին կեսին» հետազոտությունը։ Դրան հետևեց «Նյութեր Լվովի առևտրի վերաբերյալ» ժողովածուն։ Մավալով ոչ մեծ, բայց գիտական արժեքով չափազանց նշանակալից այս աշխատությունների հրապարակ գալն արդեն ուղենշեց հրիտասարդ պատմաբանի հետագա ամբողջ գիտական գործունեությունը. նա իրեն նվիրեց ուկրաինական ժողովրդի միջնադարյան պատմության պրոբլեմների ուսումնասիրությանը։ 1911 թվականին նա դարձավ Տ. Գ. Շևչենկոյի անվան գիտական ընկերության պատմա-փիլիսոփայական սեկցիայի անդամ։

Ի. Պ. Կրիպյակևիչի գիտական գործունեությունը առավել արդյունավետ և բեղմնավոր դարձավ 1939 թվականից հետո, երբ Արևմտյան Ուկրաինան, որտեղ նա բնակվում էր, միացավ մայր Հայրենիքին՝ Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետությանը։

Հայրենական պատերազմից հետո Իվան Պետրովիչը՝ արդեն ձևավորված և համընդհանուր ճանաչման արժանացած մի գիտնական, երիտասարդական ավյունով կրկին ձեռնամուխ եղավ գիտական նորանոր պրոբլեմների հետազոտմանն ու բացահայտմանը։ 1953 թ. նրա գրչի տակից դուրս եկավ «Արևմտյան Ուկրաինայի հարաբերությունները Ռուսաստանի հետ մինչև XVII դարի կեսերը» մեծարժեք մենագրությունը, իսկ 1954 թվականին՝ «Բոգդան Խմելնիցկի» ուսումնասիրությունը։ Ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ աշխատություններում Ի. Պ. Կրիպյակևիչը գիտական խորությամբ բացահայտում էր ուկրաինական ժողովրդի ազգային-ազատագրական

պայքարի հերոսական պատմությունը, նրա դարավոր բնական ձգտումը վերամիավորվելու եղբայրական Ռուսաստանի հետ։

Ի. Պ. Կրիպյակևիչը մեծ վաստակ ունի նաև Ուկրաինայի քաղաքների պատմության ուսումնասիրության ասպարեզում։

Ականավոր պատմաբանը թողել է գիտական խոշոր ժառանգություն՝ մոտ 600 աշխատություններ, ժողովածուներ, մեծ ու փոքր հոդվածներ։

Սովետական կարգերի օրոք Իվան Պետրովիչը իրեն դրսևորեց նաև որպես գիտական գործի փայլուն կազմակերպիչ։ 1951 թվականին նշանակվելով Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Լվովի հասարակական գիտությունների ինստիտուտի պատմության բաժնի վարիչ, ապա և նույն ինստիտուտի դիրեկտոր, նա շատ ջանքեր, ուժ ու եռանդ ներդրեց գիտական աշխատանքների ծավալման, երիտասարդ գիտական կադրեր պատրաստելու գործում։

1958 թ. նա ընտրվեց Ուկրաինական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս։ 1961 թ. նշելով նրա խոշոր ծառայությունները հանրապետությունում հասարակական գիտությունների զարգացման ասպարեզում, Ուկրաինական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը նրան շնորհեց գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչը աչքի ընկնող դեր է խաղացել հայ-ուկրաինական պատմական կապերի լուսաբանման ասպարեզում։ Զբաղվելով Լվովի և ամբողջ Արևմտյան Ուկրաինայի պատմության հարցերով, Իվան Պետրովիչը գեռ իր առաջին աշխատություններում նշանակալի տեղ էր հատկացնում Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմությանը։ Իսկ 50-ական թվականներից սկսած այդ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը նրա ղեկավարած ինստիտուտում դարձավ ավելի ծավալուն, նպատակասլաց և մեթոդիկ։ Իր բազմաթիվ ելույթներում, զեկուցումներում, զրույցներում նա հաճախ էր ընդգծում հայ-ուկրաինական պատմական կապերի բազմակողմանի լուսաբանման անհրաժեշտությունը։ Նրա անմիջական ղեկավարությամբ և օգնությամբ Լվովում, Կիևում և Ուկրաինայի այլ քաղաքներում աճեցին հայ-ուկրաինական պատմական կապերն ուսումնասիրող տասնյակ տաղանդավոր հետազոտողներ (Շևչենկո, Իվասյուտա Իսահիչ, Գրաբովեցկի, Կրիվոնոս, Դաշկևիչ և այլն)։ Իվան Պետրովիչը ոչ միայն ղեկավարում էր այս ուղղությամբ տարվող աշխատանքները, այլև գրանցում հանդես էր բերում ամենագործուն անձնական մասնակցություն։ Մեր հանրապետության և Ուկրաինայի գիտական հասարակայնությանը լայնորեն հայտնի են նրա հոդվածները ու զեկուցումները լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչի գործունեության (1959 թ.), Լվովի հայկական գաղութի առաջացման (1962) և այլ հարցերի մասին։ Ցնայած իր չափազանց մեծ զբաղվածությանը և առողջության ծանր վիճակին, Իվան Պետրովիչը մեծ պատրաստակամությամբ մասնակցում էր հայ-ուկրաինական գիտական նստաշրջաններին, կարդում էր հետաքրքիր զեկուցումներ, ուղղություն տալիս այդ աշխատանքներին։ Իր մանվանից ընդամենը մի քանի ամիս առաջ, անկողնուն գամված լինելով և այդ իսկ պատճառով չկարողանալով անձամբ մասնակցել Լվովում հայկական տպարանի հիմնադրման 350-ամյակի առթիվ կազմակերպված գիտական նստաշրջանին, նա այնուամենայնիվ կարողացավ պատրաստել և նստաշրջանին ներկայացնել մի չափազանց արժեքավոր զեկուցում («Ուկրաինա-հայկական պատմական փոխհարաբերությունների խորազնին հետազոտման համար»), ուր ընդհանրացնում է հայ-ուկրաինական պատմական կապերի ուսումնասիրության ասպարեզում մինչ այժմ կատարված աշխատանքները և առաջ քաշում այդ կարևոր պրոբլեմին նվիրված սինթետիկ աշխատություններ ստեղծելու խնդիրը։

Իվան Պետրովիչ Կրիպյակևիչը հզոր տաղանդի տեր գիտնական էր, անձնական մեծ հմայքով օժտված մարդ և քաղաքացի։

Նրա ամբողջ կյանքում, գիտական և հասարակական գործունեության մեջ փայլուն կերպով դրսևորվեցին հայ-ուկրաինական դարավոր բարեկամության լավագույն ավանդները։

Ակադեմիկոս Իվան Պետրովիչ Կրիպյակևիչի անմոռաց հիշատակը միշտ վառ կմնա Հայաստանի գիտության աշխատողների սրտերում։